

դայեցիք «դայս զիւարճակ Մխլոյս . . . ի վերայ արեւելից սեւագլխոցն՝ հրովարտակ հանելով ի Շահէն եւ այլ խաներացն, ուր եւ գտանիցէ թէ արեղայ անուն, թէ եպիսկոպոս անուն եւ թէ վարդապետ անուն, սպանանիցէ եւ զբազումս հալածեսցէ յաշխարհէն Հայոց, որպէս արար բազմաց: Եւ գային այս Զուղայեցիք եւ հիացուցանէին զայս աշխարհի մարդիկ եւ սուտ սքանչնելիս պատմէին թէ բազմութիւն մարախոց ընդ իւր շրջեցուցանելով. եւ որք հակառակին եւ ոչ լսեն հրամանացն՝ զսեւագլուին ի ձեռն չտալով նմա, նա՛ հրաման տուեալ մարախոցն ուտել զամենայն վաստակ եւ զխոտ երկիրն եւ սպառել զամենայն պտուղ անդոյ նոցա. եւ < այլ > ստայօղութիւնս բազում» (470):

Իրօք ալ նոյն շրջանին կար մարախի աշխարհասաստ պատուհասը. ցնցուած էր ժողովուրդը. եւ Զուղայեցիք օգտագործեցին զայն՝ ամբոխը Մեխլուի շուրջը հաւաքելու: Մարախի մասին ժամանակակից մը կը գրէ<sup>2</sup>. «Ես Հասանս . . . գնեցի զսա . . . երեք թուման տուի առայ այնմ ժամանակին, որ մորեխն բաղում երկիր աւերեաց. թիւն ՌԿԷ (1618) էր. բազում սղութիւն եղաւ»: Ուրիշ մը՝ Յովհաննէս երէց 1621ին կ'օրինակէ ժողովածու գիրք մը «ի երկիրս Գանձոյ ի գուղս Շատախ կոչի», «ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որ

<sup>2</sup> Աւետարան Եղիարդի եկեղեցւոյն: 1627ին Հասան ոմն նորոգել կու տայ ձեռագիրս Սիմէոնի ձեռօք «ի գիւղն Վարդենիս ի յերկիրն Գեղամայ»: